ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Գտնվելով տեղեկատվական հասարակության տեխնոլոգիաների աննախադեպ գիտատեխնիկական հայտնագործության տպավորության ներքո՝ 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ճապոնիայի գիտնականները սկսեցին ինտենսիվորեն քննարկել մարդկության՝ իր զարգացման որակապես նոր փուլի անցման հարցը: Ի հայտ եկավ հասարակական-քաղաքական մտքի նոր ուղղություն, որը հայտնի էր որպես տեղեկատվական հասարակության հայեցակարգ: Ներկայումս ձեռք են բերվել որոշակի արդյունքներ, ձևակերպվել են հիմնական եզրերը, մշակվել են տեղեկատվական հասարակությունը բնութագրող լեզուները, և հայտնի են դարձել վերջինիս հիմնական առանձնահատկությունները /1/:

Հասարակության տեղեկատվայնացումը՝ որպես տեղեկատվական տեխնոլոգիական գլոբալ հեղափոխության վերջնական արդյունք և հիմնական բովանդակություն, կարելի է քննարկել տարբեր ասպեկտներով: Տեխնիկա-տեխնոլոգիական բնագավառում տեղեկատվայնացումը հասկացվում է որպես արտադրության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործընթաց՝ ուղղված արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Նման պարագայում տեղեկատվության օգտագործումը սահմանափակվում է արտադրության և կառավարման ոլորտում: Սակայն տեղեկատվայնացման հասկացությունը ինժեներա-տեխնիկական նման իմաստով կլինի բավականին միակողմանի: Իրականում տեղեկատվայնացումը միաժամանակ և տեխնոլոգիական, և սոցիալական գործընթաց է: Այս նոր երևույթը ոչ միայն գիտատեխնիկական այլ նաև սոցիալական երևույթ է, որը ի հայտ է եկել որպես հասարակության վրա գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության արդյունք: Եվ դրա համար ավելի լայն իմաստով տեղեկատվայնացումը կարելի է հասկանալ որպես մարդկության կենսագործունեության ոլորտ: Սկզբունքորեն հասարակության տեղեկատվայնացումը սոցիալ-տեխնիկական երևույթ է, որի բովանդակությունը հանդիսանում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով սոցիալա-

կան հարաբերությունների և գործընթացների ձևափոխումը և որակական կատարելագործումը:

Տեղեկատվական հասարակության /ՏՀ/ տեսության զարգացումը ապահովեց վերջինիս արժանի և արտակարգ լայն տարածումը ժամանակակից հասարակական գիտությունների մեջ: Որպես տեսական նոր պարադիգմա ՏՀ-ն վերածվում է ժամանակակից սոցիալական և քաղաքական համակարգերի համար մեթոդաբանական հիմքի: Դա բացատրվում է մի քանի պատճառներով.

ա. ՏՀ համակարգը իր մեջ ներառում է սոցիալ-փիլիսոփայական տեսության տարրեր և սոցիալ-քաղաքական դոկտրինայի կիրառական բնորոշ գծեր. այն ներդաշնակորեն իր մեջ ներառում է պատմական պարբերացման և արդի արևմտյան հասարակությունների պատմական վայրի բնույթի, կառուցվածքի բնորոշման տիպավորման լուծումը:

բ. ՏՀ տեսության հիմնադիրները տարբերակում են հասարակության նոր տիպի ձևավորումը՝ կապված գիտական գիտելիքի և տեխնոլոգիական ձեռքբերումների առաջընթացի հետ, որն առավել քան տեղին էր հետ պատերազմյան աշխարհում, երբ ոչ միայն սոցիոլոգիայում, այլ նաև հասարակական կարծիքի մեջ սկսեց գերիշխել գիտության, կրթության և տեխնոլոգիաների զարգացման բարձր գնահատականը:

գ. ՏՀ հայեցակարգը ի սկզբանե սուր քննադատության է ենթարկել հասարակության մեջ՝ կապիտալիստականի և սոցիալիստականի բաժանումը՝ նշելով, որ վերջինս անհրաժեշտ չափով էական չէ. իսկ կոմունիստական վարչակարգի փլուզումը ամրապնդեց այդ տեսակետը: Կապիտալիզմը և սոցիալիզմը հանդիսացան որպես արդյունաբերական հասարակության արդյունք, «գործարանային ծխնելույզների» /Տոֆֆլեր/ միանման տնտեսությամբ, իսկ այն, ինչը նրանց իրարից տարբերակում է, պարզվեց, որ պակաս էական էր, քան այն, ինչ նրանց միացնում էր:

դ. ՏՀ հայեցակարգը հնարավորություն է տալիս ոչ հակասական և առավել համակարգված կերպով նկարագրել համաշխարհային պատմական գործընթացը, որը տեղի է ունենում իր զարգացման բնականոն փուլերով՝ ագրարային, արդյունաբերական, հետարդյունաբերական հասարակություն, որը հանդիսանում է Տհ հայեցակարգի ձևավորման գլխավոր տեսական նախադրյալը:

Տեսական մոտեցումների ժամանակակից ուղղվածությունը բավականին լայն է տեղեկատվական հասարակությունը հետազոտելու համար: Ամփոփ կերպով առանձնացվում են երկու հիմնական միտում. առաջին միտման շրջանակներում աշխատող հետազոտողները հիմնվում են ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական /տհտ/ տեխնոլոգիաների հեղափոխական զարգացման երևույթի վրա: Ըստ նրանց՝ սոցիալական փոփոխությունները

համարվում են ՏՀՏ-ի դետերմինացված տարածում: 60-ական թթ վերջերից տեսական հետազոտություններում սկսվեց ավելի լայն կերպով օգտագործվել սոցիալ-հումանիտար մոտեցումը: Հասարակական-քաղաքական գիտության մեջ ի հայտ եկավ նոր ուղղություն՝ սոցիալական ինֆորմատիկա /2/: Ակնհայտ դարձավ, որ տեղեկատվայնացման գործընթացն այլևս չէր կարող սահմանափակվել տեղեկատվության նկատմամբ ֆորմալ-քանակական պատկերացումներով, որը տալիս են կիբեռնետիկան, տեղեկատվության մաթեմատիկական տեսությունը և այլ գիտություններ: Չնայած տեղեկատվության բովանդակային սահմանման հետ կապված դժվարություններին, առաջացավ մարդու տեղեկատվական-հաղորդակցական գործունեությունն ընթհանրացնող հայեցակարգային մոտեցումների անհրաժեշտություն՝ կապված նրա սոցիալ-քաղաքական և հումանիտար բովանդակության հետ: 70-ական թթ. ավելի տարածված դարձան պոստմոդերնիստների փիլիսոփայա-մշակութաբանական տեսությունները, որոնք բացատրում են գլոբալ ձևափոխումների գործընթացը՝ կապված աշխարհի պատկերի փոփոխության և նոր տիպի հետ-դասական ռացիոնալության ի հայտ գալու հետ /3/:

Փոփոխվեցին և հարստացվեցին տեղեկատվության վերաբերյալ պատկերացումները առ այն, որ արդիականացվեցին հասարակության տեղեկատվայնացման հասարակական-քաղաքական ասպեկտները: Քանզի տեղեկատվության հասկացության մեջ ամենաարժեքավորը հանդիսացավ գիտելիքը՝ ի տարբերություն տվյալների այլ տիպերի, ապա առաջացավ գիտելիքի և տեղեկատվության հասկացության տարբերակման խնդիրը: Որոշ հեղինակներ և քաղաքական գործիչներ սկսեցին ավելի հաճախ տեղեկատվական հասարակություն» (Knowlegable society) եզրի հետ զուգահեռ օգտագործել «գիտելիքի հասարակություն կամ հասարակություն՝ հիմնված գիտելիքի վրա» եզրը:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական հասարակության անցման գործընթացն իրականացվում է գլոբալ տեղեկատվական հեղափոխության ձևով: Այն անցնում է մի քանի փուլով: Նրա սկիզբը կապում են առաջին տիեզերական արբանյակի մեկնարկի հետ /1957թ./, ներառյալ էլեկտրոնիկայում միկրո հեղափոխությունների, չիպերի հայտնագործության, միկրոպրոցեսորների և նոր սերնդի համակարգիչների ստեղծման՝ միմյանց հաջորդող շարքը, նույնիսկ մինչև «հեղափոխությունից» Ինտերնետի հեղափոխություն՝ որպես տեղեկատվության տարածման համաշխարհային ցանց, որը չի ճանաչում տարածական սահմանափակում:

Գլոբալ տեղեկատվական հեղափոխությունը իրենից ներկայացնում է նոր տիպի երրորդ տեխնոլոգիական հեղափոխություն: 18-19-րդ. դդ առաջին

երկու տեխնոլոգիական հեղափոխությունները կրում էին արդյունաբերական բնույթ: Նրանց բովանդակությունը և վերջնական նպատակը հասարակությունը արդյունաբերական դարձնելու գործընթացն էր: Առաջին երկու արդյունաբերա-տեխնոլոգիական հեղափոխությունները իրականացնում էին հասարակության՝ ագրարայինից արդունաբերականի քաղաքակրթական անցումը: Նոր տեղեկատվական, տեխնոլոգիական հեղափոխությունը իրականացնում է արդյունաբերական քաղաքակրթությունից դեպի հետարդյունաբերական քաղաքակրթություն անցումը, որը հստակեցվում է տեղեկատվական հասարակության հասկացության մեջ: Վերջինիս հիմնական բովանդակությունը և վերջնական նպատակը հասարակության տեղեկատվայնացումն է:

Տեղեկատվական հասարակություն եզրը առաջին անգամ առաջարկվեց 60-ական թթ. /Ֆ. Մախլուպ, ԱՄՆ և Տ. Ումեսայա, Ճապոնիա/, բայց այս հասկացությունը ավելի խորացվեց և հստակեցվեց հետարդյունաբերական տեսության զարգացման հետ: ՏՀ եզրը ոչ միանգամից ընդունվեց միջազգային հանրության կողմից: Անցած դարի 70-90-ական թթ. եզրաբանական բանավեճերի ժամանակ որոշ հեղինակներ, որոնք հակված էին տեխնոլոգիական և տնտեսական դետերմինիզմին, նախընտրում են խոսել «հետարդյունաբերական», «հետտնտեսական» կամ «հետմոդեռն» հասարակությունների մասին: Սակայն այն բանից հետո, երբ անձամբ Դ. Բելլը հետ-արդյունաբերական հասարակությունը սահմանեց որպես տեղեկատվության և գիտելիքի գերակայության հասարակություն, ներմուծեց «տեղեկատվական արդյունաբերության» ձև և «գնի տեղեկատվական տեսություն» եզրերը, «տեղեկատվական հասարակություն» եզրը յուրացվեց և դարձավ ավելի կիրառելի:

Ֆ. Ուեբստերը իր՝ «Տեղեկատվական հասարակության տեսություն» /4/ աշխատության մեջ առաջարկում է տեղեկատվական հասարակության տեսությունների նկատմամբ ընդհանրական մոտեցում՝ ներառելով տեսությունների երկու խումբ: Առաջին խմբին նա դասում է այն տեսությունները, որոնք տեղեկատվական հասարակությունը համարում են պատմական առանձնահատուկ երևույթ, այսինքն այն, որ վերջիններս որակապես տարբերվում են մինչ այդ գոյություն ունեցած հասարակության ձևերից: Դրանք են՝ հետարդյունաբերական հասարակության տեսությունները՝ Դ Բելլը և ուրիշներ, հասարակության և մշակույթի վերաբերյալ պոստմոդերնիստական տեսությունները՝ Լիոտար (4, էջ 344), Բոդրիար (4, էջ 333) Ջեմսոն, Պոստեր (4, էջ 343), Բաուման, ճկուն (հարմարվող) մասնագիտացման տեսությունները /Flexible specialisation/՝՝ Պիեր և Զաբել, Խերշխորն (4, էջ 119-124), որոնք ընդգծում են զարգացման տեղեկատվական ձևը /Մ. Կաստելս/ :

Տեսությունների երկրորդ խումբը, թեկուզ և ընդունում է, որ ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը ունի կարևոր նշանակություն, սակայն գտնում է, որ ի տարբերություն նախորդների՝ մարդկության հեղափոխական զարգացման ներկա փուլի պնդումը իր հիմքում ոչ մի հիմնավորում չունի: Ժամանակակից հասարակության վերաբերյալ այս մոտեցումը միավորում է հինգ ուղղություններ՝ նեոմարքսիզմ, կարգավորման տեսություն, ճկուն կուտակում, ազգային պետությունը վերլուծող տեսություններ, «հասարարական ոլորտ» հասկացության հիմքի վրա կառուցված տեսություններ: /public sphere- Խաբերմաս/: Սակայն Ուեբստերի մոտ մոտեցումների նման տարանջատումը թվում է արհեստական: Տեղեկատվական հասարակության առաջին խումբ տեսությունները առանձնանում են նրանով, որ տարբերակում են տեղեկատվական հասարակությունը նախկիններից, իսկ երկրորդը առանձնանում է նրանով, որ միավորում է տեղեկատվական հասարակությունը ագրարային կամ արդյունաբերական հասարակությունների հետ: Մեզ թվում է, որ Ուեբստերի նման արհեստական դասակարգման պատասխանը տալիս է Դ. Բելլի հայեցակարգը: Ճանաչված որպես հետարդյունաբերական տեսության դասական՝ դիտարկելով պատմության վերաբերյալ պատկերացումը իր հայեցակարգի շրջանակներում, Բելլը պնդում էր, որ թեկուզ և որոշակի ժամանակահատվածներ կարող են առանձնացվել, այնուամենայնիվ նրանց միջև խիստ սահման չի կարող լինել, քանզի «հետարդյունաբերական միտումները նախկինում գոյություն ունեցած հասարակության ձևերը տարբերակում են որպես սոցիալական էվոլյուցիայի փուլ»: Դրանք հաճախ գոյակցում են՝ խորացնելով հասարակության ամբողջականության և սոցիալական կառուցվածքի էությունը /5,26/: Կան նաև այլ մոտեցումներ հետարդյունաբերական և տեղեկատվական հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս բնութագրող տեսություններ: Այսպես, օրինակ՝ Ա. Քինգը և Բ. Շնայդերը Հռոմի ակումբում հնչերցած իրենց զեկույցում, փաստորեն, նույնականացնում են այդ երկու հասկացությունները /6, 101/: Կարծես գուշակելով ապագա սխալաստիկ վեճերը՝ ճապոնացի հեղինակ Մասուդան հենց իր գրքի վերնագրով վերջ է դնում այդ վեճին: Նրա գիրքը հենց այդպես էլ կոչվում է «Տեղեկատվական հասարակությունը որպես հետարդյունաբերական հասարակություն» /7/: Համապատասխանաբար, եթե առանձնացնենք տեղեկատվական հասարակությունը որպես որոշակի պատմական փուլ, ապա կարելի է խոսել վերջինիս ինչպես հետարդյունաբերական հասարակության մեջ ներառված լինելու, այնպես էլ՝ նրանց նկատմամբ գերակայության մասին: Դա համապատասխանում է սոցիալ-քաղաքական վերլուծության ժամանակակից մեթոդաբանությանը՝ նախընտրելով ձևափոխվող հասարակություն

եզրը՝ ի հակադրություն սոցիալական զարգացման պարզ և միակողմանի մեկնաբանության: Բնութագրելով տեղեկատվական հասարակության հասկացությունը՝ մենք հիմնվում ենք սոցիալական ձևափոխության մեթոդաբանական հայեցակարգի վրա: Նման մոտեցման պարագայում տեղեկատվական հասարակության տեսությունը համարվում է հետազոտական ռազմավարություն, որը նկարագրում է տեղեկատվական-տեխնոլոգիական, սոցիալ-քաղաքական և հասարակական կյանքի հոգևոր ձևափոխումների՝ իր մասշտաբներով հեղափոխական ծավալները՝ ձևավորելով մարդկային քաղաքակրթության որակապես նոր մակարդակ: Ինչպես նշում է հայ սոցիոլոգ Գ. Պողոսյանը՝ սոցիալական ձևափոխության գաղափարը չի հակասում զարգացման գաղափարին, բայց հստակեցնում և հարստացնում է վերջինս սոցիալական ձևափոխումների ավելի ստույգ գործող հասկացություններով /8/: Մեթոդաբանական նման մոտեցման դեպքում տեղեկատվական հասարակությունը նախորդ արդյունաբերական զարգացման ձևափոխման արդյունք է: Այն հիմնվում է գիտատեխնիկական հեղափոխական ձեռքբերումների վրա՝ իր ամբողջականության մեջ ձևավորելով գլոբալ տեղեկատվական հեղափոխության երևույթը: Բնականաբար, այդ երևույթը պահանջում է մանրակրկիտ վերլուծություն վերջինիս՝ գիտատեխնիկական, սոցիալ-քաղաքական և մշակութային հիմնավորումների տեսանկյունից:

Գրականություն

1. Տես . Белл Д. Грядущее постиндустриальное общество, Опыт социального прогнозирования. М. Академия,1999; Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. М. ГУ ВШЭ,2000; Тоффлер Э. Третья волна. М. АСТ, 2002.
2. Колин К. К. Социальная информатика - научная база постиндустриального общества. Социальная информатика-94, М.: 1994.
3. Бодрияр Ж. Общество потребления. М.:Республика,2006.
4. Уэбстер Ф. Теории информационного общества. М.: Аспект-Пресс, 2004
5. Ցիտվում է. Новая постиндустриальная волна на Западе. Антология. Под ред. Л.Иноземцева. М.:Academia, 1999. С.26-27
6. А. Кинг, Б. Шнайдер. Первая глобальная революция. Доклад Римского клуба. М.: Прогресс-Пангея, 1991.)
7. Masuda Y. The Information Society as Post-Industrial Society. Wash., 1981; 8. Տես. Погосян Г. Армянское общество в трансформации. Ереван, «Асохиг», 2003.: Погосян Г. Теории модернизации и постсоветское общество: судьба социальных трансформаций в Армении. - Журнал "Общество и Экономика". М., 2003, N.6 с. 166-193.